

գեկ

91
օ. II. 13.0

Մ. ԿԱԼՄԱՆՈՎԻՉ

ԴԵՊՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ,
Դ Ե Պ Ի
ՌՈՒՒՐԼԻ ԱՌ ՌՈՒՐԼԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Քարգռ. Մ.



331.87

4-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ՏՈՒՆՔԱՆՈՒՄ, ՀՐԱՑԱՐԱՆԿԱԶՈՒԹ.

Մուտքով

1931—VII

Ռուսաստանի ԴՊՆ

М. КАЛМАНОВИЧ

ЗА ХОЗРАСЧЕТ

3 А

ПРОВЕРКУ РУБЛЕМ

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Сев.-Кав. кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„К Р А Й Н А Ц И З Д А Т“

Ростов н-Д. Газетно-книжн. тип. СККПО.

полнрайлита № 3048.

Ст. ф. Б6 125x176.

Зам. № 3100—1500.

331.87

4-16

РОССИЙСКИЙ ТООР

1143

15 JAN 2010
652.5

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՐ ՊԵՏԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՓՈՐՏԸ

Բանվորների ու գյուղացիների լայն մասսաները պետք է լավ գիտենան յերկու կարևորագույն որենքներ, վորոնք խորհրդային կառավարութունն ընդունել էր 1931 թվականի հունվարի 14-ին, «վարկային ռեֆորմի պրակտիկայի բարելավման միջոցների մասին» և 31 թվականի մարտի 20-ին, «վարկավորման սխեմայի փոփոխությունների, վարկային աշխատանքի ամրապնդման և բոլոր տնտեսական որդաններում տնտեսական հաշվարկն ապահովելու մասին»: Այդ որենքները նպատակ են ունեցել բարելավել մեր ամբողջ տնտեսական ու բանկային աշխատանքները, նրանք կոժանդակեն մեր սոցիալիստական շինարարության պլանների իրականացումը և իր ժամանակին կատարման:


Նոր որենքներում խոսվում է վարկային ռեֆորմի մասին, վորն անց է կացված 1930 թվականի սկզբում, Խնչո՞ւմն էր կայանում 1930 թվականի վարկային ռեֆորմը: Խնչո՞ւ համար էր պետք նրան մի շարք ուղղումներ անել և ինչի՞ն են հանգում այդ ուղղումները: Մեր ամբողջ տնտեսութունը վարվում է խիստ պլանով: Այդ պլանի հիմքն է կազմում մի խնդիր—ներկա տասնամյակի ընթացքում հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներից: Այդ նշանակում է, վոր բոլոր միջոցները, վորոնք ունի մեր պետութունը,—նույնպես մենք բաշխում ենք պլանային կարգով: Այլևի շատ միջոցներ տալիս ենք արդյունաբերության ա՛յն ձյուղերին և այն ձեռնարկություններին,

վորոնք, սոցիալիստական տնտեսութեան ընդհանուր պլանի համաձայն, առանձնապէս կարևոր են: Միջոցների պլանային բաշխումը խորհրդային իշխանութիւնն իրադրութեամբ կ'պետական բանկի միջոցով:

Մինչև վարկային ռեֆորմն անցկացնելը մեր յերկրում գործադրվում էր այսպես կոչված՝ առևտրական (կոմմերչեսկի) վարկավորումը. մի տնտեսական որգան վարկով ապրանք էր տալիս մի ուրիշ տնտեսական որգանի, տալով և առնելով մուրհակներ: Այդ մուրհակները հաշվի յեր առնում պետական բանկը. այն տնտեսական որգանին, վորը մուրհակով ապրանք էր ծախել, բանկը վճարում էր նրան հասանելիք գումարը, իսկ ապրանք առած տնտեսական որգանի հետ հաշվարկումները բանկն իր վրա յեր վերցնում: Այսպիսով այն տնտեսական որգանը, վորը մուրհակով ապառիկ ապրանք էր ստանում, ինքն էլ պարտք էր մնում բանկին:

Բայց վարկավորման այս յեղանակը բանկին հնարավորութիւն չէր տալիս իրօք կարգադրել վարկը: Ամեն մի տնտեսական որգան իր հայեցողութեամբ կարող էր վարկ տրամադրել մի վորեւ տնտեսական որգանի, իսկ վճարելն ընկնում էր բանկի վրա: Պատահում էր, վոր այն ձեռնարկութիւնը, վորին վարկ էր տրվում, իսկի միջոցներ էլ չունէր իր մուրհակների դիմաց վճարելու: Դրանով խախտվում էր միջոցների պլանային բաշխումը:

1930 թվականի սկզբներում մեր յերկրում սոցիալիստական շինարարութիւնը հակայական հաջողութիւններ ունեցավ: Արդյունաբերութեան մեջ կապիտալիստական տարրերը տակովն յեղան: Առխաղային ու կոլեկտիւ շինարարութեան կառուցումը պլանային սկզբունքն արագութեամբ տրամադրում էր տնտեսութեան մեջ: Այս



43156.63

բոլորն առաջ բերեց վարկավորման ձևերը վերականգնելու անհրաժեշտութիւնը, պետական բանկը դարձնելով ամբողջ ժողովրդական տնտեսութեան համար միակ հաշվարկային կազմակերպութիւն:

Վարկային ռեֆորմի վերաբերյալ 1930 թվականի հունվարի 21-ի որոշմի համաձայն, առևտրական վարկավորումը փոխարինվեց բանկային վարկավորումով: Տնտեսական որգանները ղրկված են մեկ-մեկու վարկով մի վորեւ բան ծախելու իրավունքից: Վարկավորելու իրավունք ունի միայն պետական բանկը:

ԻՆՁՈՒ ՀԱՐԿԱՎՈՐ ԵՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՄՏՏՆԵԼ ՎԱՐԿԱՏՅԻՆ ՌԵՖՈՐՄՈՒՄ

Վարկային ռեֆորմը կառավարութեան կողմից ընդունվեց ճիշտ և իր ժամանակին: Բայց այդ որոշմը գործնականում կիրառելիս պետական բանկը թույլ տվեց մի շարք սխալներ, վորոնք վիժեցնում էին տնտեսական հաշվարկը ձեռնարկութիւններում: Վարկային ռեֆորմի ոլրակտիկայի աղավաղման մեջ պակաս դեր չխաղացին մենշեիկ—վնասարարները, վորոնք աշխատում էին պետական բանկում: Որինակ, մենշեիկ Շերը դատարանում հայտարարեց, թե վնասարարական աշխատանքն առանձնապէս աշխուժացավ հենց վարկային ռեֆորմի նախապատրաստութեան ժամանակ: Նրա ասելով, վնասարարութեան հիմնական յեղանակն էր «վարկային ռեֆորմն անցկացնելու ժամանակ մի շարք դժվարութիւնների ստեղծումը»: Վնասարարներն աշխատում էին ամեն կերպ բարդացնել ու խճճել հարցը, վորպեսզի այդ ձևով վիժեցնեն վարկային ռեֆորմի ճիշտ անցկացումը, վորի կարևորութիւնը մեր սոցիալիստական շինարարութեան համար նրանք շատ լավ են հասկանում:

Այն խոշորագույն սխալներից մեկը, վոր պետական բանկը թույլ տվեց վարկային ռեֆորմն անցկացնելու ժամանակ, տնտեսական որդանների իրենց պլանի համաձայն վարկեր տալն եր—այսինքն այն չափով վարկեր, վորն անհրաժեշտ եր տնտ. որդանին, յեթե նա լիովին կատարեր պլանը: Յեւ դուրս եր գալիս, վոր մի քանի ձեռնարկություններ իրենց պլանները չէին կատարում, իսկ վարկերն ստանում եյին լրիվ, ինչպես և այն ձեռնարկությունները, վորոնք կատարում եյին պլանը: Այսպիսով լավ ու վատ ձեռնարկությունները զրվում եյին միատեսակ պայմանների մեջ: «Պլանի համաձայն» վարկավորումը վերացնում եր տնտեսական որդանների պատասխանատվությունը՝ բանկից վերցրած փողը ճիշտ ոգտագործելու ասպարիզում, քանի վոր բանկը ծածկում եր տնտ. որդանների աշխատանքի ձեղքվածքներն և թերությունները:

Այս պատճառով կառավարությունը վորոշեց, վոր բանկը մայիսի 1-ից վարկ տա վոչ թե պլանի, այլ պայմանագրի համաձայն, վորը կնքվում ե տնտեսական որդանների մեջ: Յերբ տնտեսական որդանը բանկ ներկայացնի իր արտադրանքի վաճառման պայմանագրերը (վորի համար նա փող պետք ե ստանա գնորդից), ինչպես և իր մատակարարման պայմանագրերը (վորի համար նա պետք ե փող վճարի հաշվաթողին), այն ժամանակ բանկն ել կվորոշի վարկի չափը, վորը նրանից պիտի ստանա տնտեսական որդանը:

Իսկ փողը սն. որդանին բանկը տալու յե այն չափով, ինչ չափով վոր կատարվում ե պայմանագիրը: Յեթե տնտեսական որդանը կատարում ե պայմանագրերով իր վրա վերցրած բոլոր պարտավորությունները,—արտադրանքի քանակության, տեսակի, վորակի ու գների վերաբերմամբ, նա պե-

տական բանկից լիովին կատանա իրեն հասանելի միջոցները: Իսկ ինչ կլինի, յեթե պարտավորությունները չկատարվեն: Ասենք թե գնորդին չի արված այն տեսակը, վորը նախատեսված եր պայմանագրում: Այդ ժամանակ գնորդը չի ընդունի աղբյուրի ապրանքը, իսկ յեթե ընդունի յեւ—ավելի ցածր գնով, քան թե զրված եր պայմանագրում: Ուրեմն բանկն ել հաշվաթողին բոլորովին չի վճարի, կամ կվճարի մի մասն այն գումարի, վորը զրված ե պայմանագրում:

Պետական բանկը 1930 թվականի վարկային ռեֆորմի անցկացման գործում սխալ թույլ տվեց նաև փողը տալու՝ կարգի տեսակետից: Նա փողը հաշվաթողին վճարում եր իսկույն և յեթ, ճնաց վոր վերջինը հաշիվ եր ներկայացնում բանկին: Վերցնենք մի որինակ: Մոսկվայում գտնվող ֆարրիկան ապրանք ե ուղարկել Ռյազանի կոոպերատիվին և այդ ապրանքի համար զրել և հաշիվ, ցույց տալով ապրանքի քանակությունը, տեսակն ու արժեքը: Մոսկվայի ֆարրիկան այս հաշիվը տանում ե պետական բանկ—Մոսկվայում—և իսկույն ստանում ե բոլոր հասանելիք գումարը: Ինչ եր դուրս գալիս այս տեսակ կարգից: Մոսկվայում գտնվող բանկը չգիտեր, թե արդյոք Ռյազանի կոոպերատիվի հաշվում փող կա՞ թե վոչ: Յեթե Ռյազանում, բանկում, կոոպերատիվը փող չուներ, ուրեմն բանկը տվել ե պետական փող. իսկ թե գնորդը նրան յե՞րբ ե վերադարձնելու այդ փողը, հայտնի չեր: Չե՞ վոր գնորդը նրան չեր հանձնարարել վճարել իր հաշվից, այն ել ախր ինքը փող չուներ: Իսկ բանկը վճարում եր այդ փողերը: Ուրեմն բանկի կողմից չկար պետական քսակի շահերի և վոչ մի պաշտպանություն:

Այսպիսի կարգի դեպքում գնորդը շահադրդոված չեր

նրանով, վորպեսզի ուղիղ շրջանառութեան մեջ դնի իր կապիտալները: Ձե՞ վոր նա չեր կարող ինչպես պետք է գործադրել նրանց, քանի վոր մեկ էլ տեսար հաշիվ չեկալ նրա վրա, վորն առանց նրա համաձայնութեան վճարված է բանկի կողմից:

Գնորդը նույնիսկ չգիտեր, թե ի՞նչ ապրանքի համար է վճարում: Նրա կողմից ուրիշ քաղաքում բանկը փող է տվել, իսկ նա դեռ հաշիվն էլ չի ստացել և ուրեմն չգիտի, թե արդյոք այն ապրանքն է ուղարկված, վոր ինքն է պատվիրել: Ուրեմն գնորդի կողմից վոչ մի կոնարու չեր կարող լինել հայթայթողի վրա: Հայթայթողը կարող էր չկատարել իր պարտականութիւնները գնորդի առաջ և այնուհետև մենայնիվ փողերն ստանալ լիովին: Յեւ գնորդը չեր կարող ստուգել, թե արդյոք նրան ապրանք հայթայթողը բարեխիղճ է, թե վոչ:

Յերկու նոր որենքն էլ հենց ուղղում են պետական բանկի այդ սխալները, սահմանելով վարկավորման նոր կարգ: Նորից որինակով բացատրենք այդ կարգը: Հայթայթողը — Մոսկվայի ֆաբրիկան — ըստ կոոպերատիվի հետ կնքված պայմանագրի, նրան ապրանք է ուղարկում Ռյազան: Ապրանքի հետ գնորդին ուղարկում է հաշիվ: Ռյազանի կոոպերատիվն ստանում է հաշիվը և ստուգում, թե արդյոք իր պատվիրած ապրանքն է ուղարկված: Յեթե պատվիրված ապրանքն է, գնորդը հաշվի վրա բանկին հանձնարարութիւն է գրում վճարել (սա կոչվում է ակցեպտ): Միայն դրանից հետո բանկը վճարում է հայթայթողի հաշիվը, յեթե իհարկէ գնորդի հաշիւն փող կա: Այսպիսի կարգը մի ամբողջ շարք առավելութիւններ է տալիս: Պետքանկն արամբողջ շարք առավելութիւններ է տալիս: Պետքանկն արդեն փող չի վճարի այն գնորդի համար, վորը փող չունի, դեռ փող չի վճարի այն գնորդի համար, վորը փող չունի, չի ծածկի վատ տնտեսական որդանի ճեղքվածքը: Սա ստեղ-

ծում է իսկական տնտեսական հաշվարկ և տնտեսական որդանների վրա դնում է մեծ պատասխանատվութիւն աշխատանքի համար: Գնորդն այժմ պետք է հոգ տանի այն մասին, վորպեսզի նրա հաշվում փող լինի. այն անփութ զեւարարութեւնը դեպի պետական ուղբիւն, կոպեկը, վորն ստեղծվեց վերջին ժամանակներա, պետական բանկի սխալների շնորհիվ, կվերացվի: Տնտ. որդանները կսովորեն իմանալ փողի արժեքը, հաշվել իրենց միջոցները: Իսկ չե՞ վոր սովորած չլինելով հաշվել ամեն կոպեկը, չի կարելի տնտեսութեան մեջ կուտակում ստեղծել: Իսկ առանց կուտակման չի կարելի տնտեսութիւնն առաջ շարժել հարկավոր տեմպերով, չի կարելի հնգամյակը կատարել չորս տարում, չի կարելի բարելավել բանվորների ու կոլտոգային մասսաների նյութական դրութիւնը:

Պետական բանկի սխալները հասցրին այնտեղ, վոր տնտ. որդանները բոլորովին դադարեցին հետաքրքրվել իր ժամանակին հաշվեկշիւ (բալանս) կազմելով և հաշվառքով: Հաշվեկշիւներն սկսեցին կազմվել անտանելի ուշացումներով, այնպես վոր, նրանք կորցնում էին իրենց իմաստը: Առանց հաշվեկշիւի ձեռնարկութիւնը չի կարող կանոնավոր աշխատել: Ուստի և կառավարութիւնը որենքով պարտավորեցրեց բոլոր տնտ. որդաններին՝ իր ժամանակին կազմել հաշվեկշիւները, կանոնավոր տանել հաշվառքը:

Պետական բանկի կողմից սխալ էր նաև այն, վոր նա, փոխանակ տնտեսութիւնը ուղբի առ ուղբի հսկողութեան յենթարկելու, ձեռնամուխ յեղավ տնտեսութեան պլանավորման: Մեզանում պլանավորումով զբաղվում են ուրիշ որդաններ — Պետպլանը, ԺՏԳ-ն, Մատակարարման ժողկոմատը, Հողփողկոմատը: Պլանավորումն ամենեկին չի մըտնում պետական բանկի անելիքների մեջ:

կառավարութիւնը նոր որոնքներով պետական բանկէ առաջ դրեց ուրիշ խնդիրներ.—

1. Դառնալ միասնական հաշվարկային կենտրոն մէջ յերկրորդ ամբողջ տնտեսութեան համար: Այս նշանակում է, ինչ որ տնտեսական որոշանքներ միջև բոլոր հաշվարկութիւններն անցնում են պետական բանկէ միջոցով, վորպէսզի այդ հաշվարկութիւններով պետութիւնը կարողանա միշտ տեսնել, թէ ինչպէս է վարվում տնտեսութիւնը:

2. Ուրբի առ ուրբի վերահսկողութիւն ունենալ տնտեսութեան վրա. առանց պայմանագրերի վարկեր չտալ, տնտ. որոշանքների համար փող չտալ այն ժամանակ, յերկրորդ անգամ փող չունեն. փող տալ միայն այն տնտ. որոշանքներին, վորոնք պայմանագրերի համաձայն կատարում են իրենց պարտավորութիւնները. չծածկել տնտեսական կազմակերպութիւնների վնասները, այլ ամեն կերպ նպաստել կուտակումներին: Չափազանց կարևոր է կոոպերացիայի աշխատանքի ստուգումն ուրբի առ ուրբի: Դա նրան կստի պէ ավելի շուտ կատարել ապրանքների շրջանառութիւնը, չպահել դրանք վաճառատներում, ավելի շատ հոգալ փայտանքների մասին:

3. Ամրապնդել տնտեսական հաշվարկի ձեռնարկութիւններում և տնտեսական միութիւններում:

Այս խնդիրները կատարելու համար կառավարութիւնը պետական բանկին տրամադրեց լայն իրավունքներ: Ուրիշակ, բանկն այժմ իրավունք ունի ներգործութեան մի շարք միջոցներ ձեռնարկել անկանոն վճարատուներին.— կամ մասնակի կերպով, կամ ամբողջովին փակել տնտեսական որոշանքի հաշիվը, ծախել նրա ապրանքները, յետէ նա անկանոն վճարատու լինի:

Իհարկէ, ապրանքները պիտի ծախվին վոչ թէ մասնա-

վոր շուկային, այլ ուրիշ տնտ. որոշանքներին, վորոնք կանոնավոր են աշխատում: Մի քանի այդպիսի դեպքեր արդեն յեղել են: Ուրիշակ, «Գոսշվէյպրոմը» «Մոսկովշվէյ»-ից դնելով համարյա թէ 2 միլիոն ուրբլու արտադրանք, ժամանակին չկարողացաւ վճարել «Մոսկովշվէյին» ներկայացրած հաշիվը: Պետքնկը «Գոսշվէյպրոմին» վարչութեանը համարեց անվճարունակ և այդ ամբողջ արտադրանքը ծախեց կոոպերացիային, բանվորների մեջ բաշխելու համար:

Այս դեպքը պետք է մի նախազգուշացում լինի այն բոլոր տնտեսավարներին, բոլոր տնտ. որոշանքներին, վորոնք չեն պատրաստվել հաշվարկութիւնների նոր ձևերին: Մայիսի 1-ից, յերկրորդ ամբողջ տնտեսական հաշվարկի անցկացման որոնքները գործադրութեան մեջ մտան, այդպիսի տնտեսավարները և վոչ մի ներգործութիւն չեն վաշխելու:

Տնտեսական հաշվարկի կարևորագույն նշանակութիւնը հենց նրանումն է կայանում, ինչ որ նրա ժամանակ յուրաքանչյուր տնտեսական կազմակերպութիւն պետք է ինքն ամբողջովին պատասխանատու լինի իր աշխատանքի անփութութեան և կարգավորվածութեան համար:

Տնտեսական հաշվարկն անհետաքրքիր է, պոչակաւութեան (խվոսիզմի), աջ ոպորտունիստական պրակտիկայի բնութիւնն է:

Ուրբի առ ուրբի ստուգումը տնտեսավարներին կստի վորեցնի ոգտագործել ներքին ռեսուրսները (միջոցները, հումութիւնը, կահավորանքը և այլն), սոցիալիստական կուտակման, արգֆինպլանի կատարման ու դերակատարման համար:

«Տնտեսական հաշվարկը, — ասված է կուտակցութեան Կենտրոնական կոմիտեի 1929 թվականի դեկտեմբերի 13-ի

վորոշման մեջ,—հայտնաբերում ե ձեռնարկութեան դեմքը, նպաստում ե արտադրութեան ռացիոնալիզացիային, սպասուման ու մատակարարման ճիշտ կազմակերպման և զբաղման հանդերձ առաջ ե բերում հականերդործութուն բյուրոկրատիզմի ու քաշքշուկի տարրերին»:

Մեր ամբողջ տնտեսութունը, վերելք վար, պիտի անցնի տնտեսական հաշվարկին: Բոլոր ներարտադրական ուղակները,—ցեխերը, բաժանմունքները—նույնպես պիտի փոխանցվեն տնտեսական հաշվարկին:

Տնտեսական հաշվարկին պիտի անցնի նաև գյուղատնտեսութեան սոցիալիստական սեկտորը (մասը): Մեքենա-տրակտորային կայանների համար, որինակ, տնտեսական հաշվարկի անցկացման հիմքն են հանդիսանում պայմանադրերը շրջակա կոլտոգների հետ: Մեքենա-տրակտորային կայանների (ՄՏԿ) և կոլտոգների վարչավորումը պիտի տեղի ունենա խստորեն այդ պայմանադրերին համապատասխան:

Սովխոզներում և ՄՏԿ-ներում տնտեսական հաշվարկի անցկացման արգելքները պիտի հանդիսանա գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի իջեցումն և սոցիալիստական կուտակման զարգացումը:

Ոպորտունիստները փորձում են խանգարել տնտ. հաշվարկի—կուտակցութեան ու կառավարութեան այդ կարևորագույն միջոցառման ճիշտ կիրառելուն: Որինակ, կան աջ ոպորտունիստական փորձեր՝ պայմանագրերը կնքել «ապա-հովագրութեամբ», վոչ թե արդիինսպիկանի լրիվ կատարման համար, այլ ի նկատի առնելով հնարավոր ձեղքվածքները: Այլ ոպորտունիստները տնտ. հաշվարկը հասկանում են վորպես հասարակ գործարարութեան: Իբր թե քանի վոր տնտեսական հաշվարկ ե մտցվում, ուրեմն պլանավորումն անցնում ե յերկրորդական տեղ:

«Ձախ» ոպորտունիստները չեն հասկանում տնտեսական հաշվարկի հսկայական նշանակութունը և գոռում են, վոր իբր թե տնտ. հաշվարկը վիժեցնում ե պլանավորումը: Թե աջերը և թե «ձախերն» աղավաղում են կուտակցութեան և խորհրդային իշխանութեան բուլեիկյան գիծը: Տնտեսական հաշվարկը վոչ միայն չի վերացնում պլանավորումը, այլ ամրապնդում ե նրան, բարձրացնում ամենաբարձր աստիճանի վրա:

ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՏՆՏ. ՀԱՉՎԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

Մեր ամբողջ աշխատանքում տնտեսական հաշվարկի լիակատար և ուղիղ կիրառումը հանդիսանում ե կարևորագույն պայմաններից մեկը՝ հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանը կատարելու համար:

Յուրաքանչյուր գործարկում, յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր աշխատավոր պետք ե գիտակցի այդ բանը և լարի բոլոր ճիգերը՝ վորպեսզի ոգնի խորհրդային կառավարութեան նոր որենքները ճշտորեն կիրառելու գործին: Պետք ե կազմակերպել վերահսկողութուն պատրաստի արտադրանքի վաճառման, հումույթի մատակարարման և այլ պայմանադրերի կատարման վրա: Պետք ե ինչ կերպ ել լինի, հաջողեցնել տնտ. հաշվարկի հիմունքներով ձեռնարկութունների ամբողջ աշխատանքի ամենաարագ վերակառուցումը: Պետք ե ստուգել տնտեսական որդանի ֆինանսական մասի աշխատանքը, նրանից պահանջել հաշվետվութունը ճիշտ վարել, հաշվեկշիռներն իր ժամանակին կազմել: Սոցմրցութեան ու հարվածայնութեան հիմունքներով պետք ե կազմակերպել արշավանք՝ հումույթը, նյութեղենը,

վառելիքը, բանվորական ուլժն ամեն կերպ ստուգելու,
կահավորանքը լիովին ոգտագործելու համար:

Յեթե իրենք, մասսաներն այսպիսով ձեռնամուխ
լինեն գործին, մենք կկարողանանք տնտեսական հաշվարկի
հիմունքներով իսկապես վերակառուցել մեր ամբողջ տնտե-
սական աշխատանքը:

Տնտեսական հաշվարկի իրականացումը պիտի նպաստի
մեր տնտեսական ֆրոնտի ամենաթույլ մասերի ամենաարագ
հայտնաբերման, կոգնի մեր տնտեսական ապարատի բյու-
րոկրատիզմի ու անկանոնությունների դեմ մղվող պայքա-
րին, կբարելավի ժողովրդական տնտեսության պլանավոր-
ման գործը:

Տնտեսական հաշվարկի լրիվ կիրառումը նոր հարյուրավոր
միլիոններ կսա մեռ յերկրում սոցիալիզմի շինարարության
համար:



<< Ազգային գրադարան



NL0205043

B8442-

24010

SL w p 1
801 D